ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՐՏԻ 2022թվականի N 79-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակը՝
որոշում եմ՝

1. Հաստատել 2022 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. մարտի 31
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 80-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի <<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ,ԲՆԱԿԱՎԱՅՐ ԴՍԵՂ 06-035-0048-0006 ԾԱԾԿԱԳՐԻ,5-ՐԴ ՓՈՂՈՑ, 8 ՏԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՄՎԵԼ ՀԵՆՐԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 68-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով որ,Թումանյան համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 21-ի թիվ 68-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ կառավարության 912 -Ն որոշման պահանջներին՝

Որոշում եմ.

ՈՒԺԸ կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 21-ի << Թումանյան համայնք բնակավայր Դսեղ 06-0035-0048-0006 ծածկագրի,5-րդ փողոց 8 տան հասցեում գտնվող Սամվել Հենրիկի Կարապետյանի ինքնակամ կառուցված բնակելի տունը և բնակելի պարիսպը օրինական ճանաչելու մասին >> թիվ 68- Ա որոշումը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. ապրիլի 01
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 81-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «ՔՊ պլանների մշակման կարգը սահմանելու մասին» թիվ 633-Ն որոշման 1-ին գլխի 2-րդ կետով՝
Որոշում եմ՝

Հաստատել՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի քաղաքացիական պաշտպանության պլան ը, համաձայն հավելվածի.
1) հիմնական ցուցանիշները՝ համաձայն N 1 հավելվածի.
2) պլանը՝ Թումանյան համայնքի տարածքում հնարավոր իրավիճակի և բացատրագիր, համաձայն N 2 հավելվածի.
3) տվյալները՝ Թումանյան համայնքի տարածքի քիմիապես վտանգավոր օբյեկտների վերաբերյալ, համաձայն N 3 հավելվածի.
4) կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի.
5) ցանկը՝ «Բարձր» և «Լրիվ» պատրաստականության աշխատակարգի միջոցառումների, համաձայն N 5 հավելվածի.
6) պլանը՝ Թումանյան համայնքի քաղաքացիական պաշտպանության հետախուզության և բացատրագիր, համաձայն N 6 հավելվածի.
7) հաշվարկը՝ Թումանյան համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման, համաձայն N 7 հավելվածի.
8) հաշվարկը՝ Թումանյան համայնքի բնակչության պատսպարման, համաձայն N 8 հավելվածի.
9) հաշվարկը՝ Թումանյան համայնքի բնակչության պատսպարման, համաձայն N 9 հավելվածի.
10) հաշվարկը՝ Թումանյան համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների, համաձայն N 10 հավելվածի.
11) հաշվարկը՝ կապի միջոցների, համաձայն N 11 հավելվածի.
12) հաշվարկը՝ ինժեներական տեխնիկայի ապահովման, համաձայն N 12 հավելվածի:
2. Սույն հրամանի 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:
3. Որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:
4. Որոշումը հայտարարել ըստ առնչության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 22 թ. ապրիլի 04
ք.Թումանյան